[ԱՆՎԵՐՆԱԳԻՐ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ]

Տարիներ առաջ՝ 1964 թ., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում նշվում էր հայագիտության երախտավորներից Նիկոլայ Յակովլևիչ Մառի ծննդյան հարյուրամյակը: Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը իր ելույթում հիշելով Մառի և Թորամանյանի մեծ բարեկամությունը, անդրադարձավ նաև Թորամանյանի գործունեությանը ու մեծ գոհունակությամբ հայտարարեց, թե «այժմ մենք կատարելապես համոզվեցինք, որ Զվարթնոցը իրականում եղել է այնպիսին, ինչպիսին ներկայացրել է Թորոս Թորամանյանը իր վերակազմության նախագծում»:

Ի՞նչն էր դրդում Բ. Առաքելյանին այդպիսի հայտարարությամբ հանդես գալ տվյալ հոբելյանական նիստում:

Բանն այն է, որ դրանից առաջ ճարտարապետության դոկտոր Ա. Վ. Կուզնեցովը և Ս. Խ. Մնացականյանը նորովի էին մեկնաբանում Զվարթնոցը և այն պատկերում էին ոչ այնպես, ինչպես վերակազմել էր Թորամանյանը:

Զվարթնոցի վերաբերյալ նոր տեսությունները, որ մշակվել էին անցած շուրջ տասը տարիների ընթացքում, ներկայացվում էին այնպիսի ձևով և տրամաբանությամբ, որ թվում էր, թե դրանք անվիճելի են, գիտականորեն հիմնավորված և փաստարկված: Այդ ժամանակ Ս. Մնացականյանի «Զվարթնոց» մենագրությունը սպասում էր հրատարակման: 1963-1964 թվականներին տեղի ունեցավ անսպասելին՝ Հայպետհրատը լույս ընծայեց բոլորովին այլ մենագրություն, նույնպես «Զվարթնոց» վերտառությամբ, որի էջերում հանգամանորեն պարզաբանվում էին ինչպես Թորոս Թորամանյանի, այնպես էլ նրան վիճարկողների հայացքներն ու եզրակացությունները:[1]

1964 թվականին հիշյալ աշխատությունը քննարկման է դրվում ճարտարապետների միությունում. այն տևում է երեք երեկո և մի ցերեկ: Այս վերջինս տեղի է ունեցել Զվարթնոցի հուշարձանում: Այդտեղ, մոտ հիսուն

---

[1] *Տիրան Մարության*, Զվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ. ճարտարապետական-քննական ակնարկ, Երևան, 1963:

ճարտարապետների և պատմաբան գիտնականների մասնակցությամբ, ավերակի մանրազնին հետազոտությամբ, պարզվում է, որ նոր տեսության հեղինակների, հատկապես նոր վերակազմությամբ հանդես եկած Ս. Մնացականյանի գրեթե բոլոր փաստարկները չեն ամրացվում տեղում առկա բեկորներով ու զանգվածներով: Ընդհակառակը, եզրակացվում է, որ Զվարթնոցը եղել է այնպիսին, ինչպիսին վերակազմել է Թորամանյանը, և որ նրա ճշգրտության վիճարկողներն իրենց աշխատության հիմքում ընդունել են ոչ թե ռեալ ավերակը, այլ կանխակալ, վերացական, գաղափարական տեսություններ, ինքնաստեղծ ու ոչ հավաստի:

Այս դեպքից հետո Ս. Մնացականյանի պատրաստած մենագրությունը հրատարակելուց հրաժարվում են ինչպես Գիտությունների ակադեմիայի, այնպես էլ պետական հրատարակչությունները:

1970 թվականին լրանում էր Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հիսնամյակը: Մոսկվայի «Искусство» հրատարակչությունը ցանկանալով իր նվերը մատուցել հոբելյարին, համաձայնություն է տալիս հրատարակել Ս. Մնացականյանի (մինչ այդ անհաջողության մատնված) աշխատությունը: Հեղինակն էլ հարմար առիթը բաց չթողնելով ԳԱ հրատարակչությանն է ներկայացնում նույն աշխատության նաև հայերեն, առավել ընդարձակ տարբերակը: Երկուսն էլ լույս են տեսնում 1971 թվականին,[2] սակայն այդ չի խանգարում, որ լայն ընթերցողներն իրենց համոզմունքներում նախընտրեն Թորամանյանի՝ տասնամյակներ ի վեր ճանաչման արժանացած վերակազմությունը:

Հետագայում այլ հետազոտողներ նոր փաստեր բերեցին ի նպաստ Թորամանյանի վերակազմության: 1977 թվականին «Պատմա-բանասիրական հանդեսի» երկրորդ համարում, հանրապետության վաստակավոր շինարար, գիտությունների թեկնածու ինժեներ Հ. Գ. Սարգսյանը կոնստրուկտորի հայացքով վերլուծության է ենթարկում Զվարթնոցի շինարարական-կառուցողական առանձնահատկությունները և եզրակացնում է, որ Թորա-

[2] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971; *Հ. Հ. Մնացականյան*, Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков, Москва, 1971:

մանյանի վերակազմության ձևով Զվարթնոցը կարող էր կանգուն գոյատևել:[3]

Ս. Մնացականյանը Հ. Սարգսյանի հոդվածի լույս տեսնելը հարմար առիթ համարելով, մեկ տարի անց նույն «Պատմա-բանասիրական հանդեսի» երկրորդ համարում նորից լույս է ընծայում իր քսանամյա վաղեմություն ունեցող հետազոտությունը, բազմիցս հրատարակված և նույնքան հավանության չարժանացած գծագրերն իրենց բացատրականներով, առատորեն լցված հակասություններով, անճշտություններով և քմահաճ արտահայտություններով:[4]

Զարմանալին այն է, որ այսօր նույն ձևով, ինչպես քսան տարի առաջ Ս. Մնացականյանը ոչնչից չխորշելով իրեն թույլ է տալիս կանխամտածված անճշտություններ վերագրել այլ հետազոտողներին ու նրանց գործերին և անմիջապես իր իսկ կողմից թխված անճշտությունները ենթարկում անողոք քննադատության, դրանով էլ, ահա, երևույթային տպավորություն է ստեղծվում հօգուտ իր թյուր տեսությունների: Անհանդուրժելին այն է, որ նրա դիտարկվող հոդվածն իր տեսակի մեջ եզակի չէ, այլ արգասիք է սիստեմատիկ աշխատանքում որդեգրած արատավոր մեթոդի:

Նկատի ունենալով, որ սովորական հոդվածի սահմաններում հնարավոր չէ ընթերցողին ներկայացնել Զվարթնոց տաճարի լիակատար նկարագիրը ամենայն մանրամասնությամբ, այստեղ բերում ենք մեր ասածի ապացույցները միայն:

Ինչպես հայտնի է, Թորամանյանը իր վերակազմության նախագծում թողել է տաճարի առաջին աստիճանի առաջին հարկի հատակագիծը միայն, մյուս հարկի՝ առաջին աստիճանի երկրորդ հարկի՝ վերնահարկի, երկրորդ աստիճանի և գմբեթային մասի համար հատակագծեր չի թողել: Նախագծում ճակատից և կտրվածքից բացի, առկա է նաև մի սխեմատիկ գծագիր, թե

---

[3] *Հ. Գ. Սարգսյան*, Զվարթնոցի կառուցվածքների մասին. – «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1977, N 2, էջ 215-222:

[4] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցի քարային կոնստրուկցիաների հարցի շուրջը. – ՊԲՀ, 1978, N 2, էջ 207-223:

ինչպես է երկրորդ հարկի բոլորակ պատը նստում առաջին հարկի սյուների վրա:

Ս. Մնացականյանը հիշյալ սխեման անվերապահ ընդունելով որպես երկրորդ հարկի հատակագիծ, դրա հիման վրա և առանց օգտագործելու Թորամանյանի կատարած կտրվածքը, ինչպես և տեքստային մասում գրած շատ կարևոր բացատրություններն ու հետաքրքիր ենթադրությունները, ստեղծում է գծագրեր երկրորդ հարկի և երկրորդ աստիճանի համար ու դրանք ամբողջությամբ վերագրում Թորամանյանին: Եվ քանի որ կանխակալ նպատակներով իր կազմած և Թորամանյանին վերագրած այդ հատակագծերը բավական անմիտ են ու արտառոց, այդպիսիք վերցնում է քննադատության կրակի տակ, եզրակացնելով, թե «*…այս բոլոր, 7-րդ դարի բարձրարվեստ ճարտարապետության համար միանգամայն խորթ լուծումները խիստ մեծ անջրպետ են ստեղծում Թորամանյանի վերակազմության նախագծի և հայկական ճարտարապետության այդ կլասիկ դարաշրջանի հիմնական սկզբունքների միջև…*»:[5]

Չբավարարվելով հայ ընթերցողին ապակողմնորոշելու փորձերից, Ս. Մնացականյանն ավելի հեռու է գնում և իր աշխատության ռուսերեն տարբերակում ռուս ընթերցողին է ներկայացնում Թորամանյանի մտքերը կեղծված, աղավաղված թարգմանությամբ:

Ահավասիկ իր Զվարթնոցի բացատրագրում Թորամանյանը գրում է. «Այս վերջին (դրսի - Տ. Մ.) պատին զուգահեռական կլորությամբ հավասարապես բարձրացած էր երկրորդ պատ մը, որն իբր պատվանդան ունեցեր է մեծ մայր սյուները իրարու միացնող աղեղներու միջոցով կազմված օղակը… և հավանաբար, այս պատը ոչ թե գոց, այլ սյունազարդ մը եղած ըլլալու է»:[6] Վերոհիշյալ հատվածը Ս. Մնացականյանի թարգմանությամբ տպագրված է. «Аналогичная стена возвышалась и над экседрами внутреннего тетра-

---

[5] *Ս. Խ. Մնացականյան,* Զվարթնոցի վերակազմության նախագծի հարցի շուրջը. - «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ», 1959, N 4, էջ 78:

[6] *Թորոս Թորամանյան,* Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, էջ 249:

конха, причем здесь она по-видимому, не была глухой, а была расчленена колоннадами»:[7]

Կարծիքների բախման առիթ հանդիսացող այս խիստ կարևոր հարցում, Թորամանյանի խոսքը պարզում, հանգուցալուծում է ոմանց անպարզ թվացող Զվարթնոցի շինության որոշ դրվագների կերպը, մինչև Ս. Մնացականյանի թարգմանությունն այդ պարզագույն գաղափարը վեր է ածում մի խճճվածքի, այն փոխակերպում այնպես, որ կարծես Թորամանյանը հաստատում է ոչ թե իր, այլ Մնացականյանի տեսությունը:

Այնուհետև Ս. Մնացականյանը ի չարն է գործադրում Թորամանյանի այս դարասկզբում գործածած որոշ կարևոր տերմինների նշանակության երանգավորումը մեր օրերում: Այսպես, Թորամանյանի «թաղ» (свод)-ի փոխարեն գործածում է «գմբեթարդ կամար»-ը, սրանից ելնելով Մնացականյանը գրում է, թե Թորամանյանը վերնահարկի և երկրորդ աստիճանի թմբկաձև պատը հենում է քարի կոնստրուկցիա ունեցող կամարի վրա, մինչ Թորամանյանը դրանց անվանում է «զորեղ աղեղներ», որը ոչ թե կամար է, այլ երկկոր հզոր թաղի աղեղնաձև եզրագիծ:

Թորամանյանի գործերի այսպիսի աղավաղումները Ս. Մնացականյանի մոտ հաշվվում են տասնյակներով:

Տողերիս գրողի 1963 թ. լույս տեսած «Զվարթնոց» աշխատության Ս. Մնացականյանի գրախոսականում մեկնաբանությունների գերակշիռ մասը հետազոտողի համար անթույլատրելի աղավաղումներ են:[8] Մեր «Միայն երեք բեկոր» վերնագրով հոդվածում գրել ենք. «*Բնական է մտածելը, որ Թորամանյանը, իր ժամանակին այդ բեկորները տեսնելով, չափագրել, որոշել է դրանց տեղը և իր գծագրում պատկերել է ճշտորեն…*»:[9] Ս. Մնացականյանը այդ հոդվածի կապակցությամբ գրում է. «*Վերջերս Տ. Մարությանը…*

---

[7] *С. Х. Мнацаканян*, Звартноц. Памятник армянского зодчества VI-VII веков, Москва, 1971, с. 19.

[8] *Ս. Խ. Մնացականյան*, «Տ. Մարության - «Զվարթնոցը և զվարթնոցանման տաճարները», Հայպետհրատ, 1963». գրախոսություն. - «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ, 1964, N 2:

[9] *Տ. Մարության*, Միայն երեք բեկոր (պրպտումներ Զվարթնոցի ավերակում). - «Երեկոյան Երևան», 1 ապրիլի 1978 թ.:

«հայտնագործեց» վերնահարկի որմնասյուների քարերը, որոնց, իբր «չէին նկատել» ոչ Թ. Թորամանյանը, ոչ էլ Ս. Մնացականյանը»:[10]

Ս. Մնացականյանը նկատելով, որ ավերակում գտնվող հիշյալ բեկորների գոյության փաստը անառարկելիորեն հաստատում է Թորամանյանի վերակազմությունը և անառարկայական դարձնում Ս. Մնացականյանի վերակազմական փորձերը, թող թույլատրվի բառերը գործածել իրենց բուն նշանակությամբ, *աներկմիտ կեղծում է* թերթի իմ վերոնշյալ հոդվածը:

Ս. Մնացականյանը բոլորովին նույն ձևով *կեղծում է* Հ. Սարգսյանի «Զվարթնոցի կառուցվածքների մասին» աշխատությունը, վերջինիս հեղինակին վերագրում այն, ինչ որ նա չի ասել:

Որպեսզի վերնահարկի սյուների բեկորներին նորից չանդրադառնանք, ընթերցողին ներկայացնենք հարցի էությունը:

Նույն իր հոդվածում Ս. Մնացականյանը շարունակում է «Մինչդեռ որմնասյուների այդ քարերը պատկանել են երկրորդ հարկաբաժնի արտաքին խուլ կամարաշարին և տեղ են գտել թե Թ. Թորամանյանի և թե մեր վերակազմությունների նախագծերում»:[11]

Որ այդ երեք բեկորները տեղ են գտել Թորամանյանի վերնահարկի ներքին սյունաշարում, այդ մասին գրված է մեր հոդվածում, ինչ վերաբերում է դրանց «… պատկանելը երկրորդ հարկաբաժնի արտաքին խուլ կամարաշարին» և Մնացականյանի և, իբր Թորամանյանի վերակազմություններում, *թյուրիմացություն* է բառիս իսկական իմաստով, որ ստորև բացահայտում ենք շուրջ չորս առումներով՝

ա) դասական ճարտարապետության տեկտոնիկայի կանոններով, շինության ճակատի վրա ստորին հարկերում գործադրություն է ստանում ցածր համաչափության սյուների համակարգը (օրդեր), կոնկրետ՝ տոսկանական կամ դորիական օրդերը, նրանից վերև համեմատաբար ձգված համաչափություն, առավել նուրբ մշակում ունեցողները – հաջորդաբար՝ հոնիականը, կորընթականը, երբեմն՝ բարդը: Այսպես է աշխարհահռչակ Կոլի-

[10] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցի քարային կոնստրուկցիաների հարցի շուրջը, էջ 218:
[11] Նույն տեղում, էջ 218:

զեում և նույն կարգով կառուցված հուշարձաններում: Այդ կանոնն իր մարմնացումն է ստացել նաև հայ ճարտարապետության մեջ. Այնպես որ Զվարթնոց կառուցողին վերագրել, թե նա տաճարի երկրորդ աստիճանում կիրառել է 45 սմ տրամագծով սյուներ (ինչպես առաջարկում է Ս. Մնացականյանը), երբ առաջին աստիճանում կիրառված են սյուներ, ընդամենը 36-38 սմ տրամագծով, թույլատրելի չէ:

բ) Զվարթնոցի հուշարձանում պահպանվում են տաճարի երկրորդ աստիճանի կամարաշարի կրնկաքարերը, որոնք նստել են որմնասյուների խոյակների վրա: Այդ քարերի ստորին մասի լայնքը 36-38 սմ է. այս նշանակում է՝ այն սյուները, որոնց վրա նստել են կամարի կրնկաքարերը չէին կարող 36-38 սմ-ից ավել տրամագիծ ունենալ: Հակառակ պատկերը կա – հատկապես բյուզանդական ճարտարապետության մեջ, երբ կրնկաքարի լայնքն ավելի է այն կրող սյան տրամագծից, իսկ այն ինչ առաջարկում է Ս. Մնացականյանը, ճարտարապետության բազմահազարամյա պատմության մեջ ոչ եղել է, ոչ էլ կարող էր լինել:

գ) Տաճարի ավերակում պահպանված կամարաշարի քարերի և, հատկապես վերևում հիշատակված կրնկաքարերի կողային հարթությունները մաքուր են տաշված 19-20 սմ-ի սահմաններում, որից այն կողմ տաշվածքը համեմատաբար կոպիտ է, քանի որ մնացել է պատի թանձրության մեջ, այս նշանակում է տաճարի երկրորդ աստիճանի կամարաշարի որմնասյուները պատի հարթությունից դուրս են եկել կես տրամագծի չափով՝ նույնպես 19-20 սմ:

դ) Զվարթնոցում եղած որմնասյուները պատի հարթությունից դուրս են գալիս ճշտորեն կես տրամագծի չափով. այդպես են տաճարի առաջին աստիճանի թմբկապատի արտաքին որմնասյուները՝ 19 սմ (տրամագիծը 36-38 սմ է), նույնպես և ներքին որմնասյուները՝ 12 սմ (տրամագիծը 24 սմ է): Երեք-քառորդ որմնասյուներ բացի գմբեթակիր սյուներից (տրամագիծը 109-110 սմ է) և Թորամանյանի առաջարկած վերնահարկից, Զվարթնոցում չկա: Ըստ որում, վերնահարկում այդ սյուները կարող էին լինել նաև լրիվ կլոր,

սակայն կառուցողը 45 սմ տրամագծով սյուներին չվստահելով կրելու վերևում բարձրացող մեծ հաստության պատը, այդ սյուները ուժեղացրել է կից պատահատվածներով։

Զվարթնոցի ճարտարապետը տաճարի ինչպես առաջին աստիճանի մեծ տրամագծի թմբուկի, այնպես էլ երկրորդ աստիճանի փոքր տրամագծով թմբուկի արտաքին հարթությունները ստեղծել է 32-ական նիստերով, հասկանալի է, որ երկրորդ աստիճանում այդ նիստերի լայնական չափերը առաջին աստիճանի նիստերի նույն չափերից զգալիորեն փոքր են եղել։ Ելնելով դրանից, նա առաջին աստիճանի սյունակամարաշարում գործադրել է զույգ որմնասյուներ, երկրորդ աստիճանում՝ մեկական սյուն. ըստ որում, սյուների տրամագծաչափը և նրանց դուրս կարկառվածքը նիստերի հարթությունից երկուստեք վերցրել է միաչափ, նաև նկատի ունենալով նույն քարերի օգտագործումը և այստեղ, և այնտեղ։

Հետաքրքիր է, որ ավերակում նույն 36-38 սմ տրամագծով որմնասյուներ կան ինչպես զույգ՝ երկուսը տաշված մեկ քարի վրա, նույնպես և կենտ։ Հասկանալի է, որ զույգերը պատկանում են տաճարի առաջին աստիճանի թմբկապատի սյունակամարաշարին, առանձինները – կենտերը՝ և առաջին, և, առավելապես երկրորդ աստիճանի թմբկապատի սյունակամարաշարին։

Այսպիսով վերջնականապես պարզված ենք համարում, որ Զվարթնոցում պահպանված 45 սմ տրամագիծ ունեցող, 3/4 որմնասյուների բեկորները, որ չեն պատկանել արտաքին դեկորատիվ սյունակամարաշարին, անվրեպ հանդիսանում են թորամանյանական վերնահարկի, տաճարի կենտրոնին բացվող սյունակամարաշարի երբեմնի կանգուն գոյության անժխտելի վկաները։

Հմուտ կոնստրուկտոր ինժեներ Հ. Սարգսյանի, Ս. Մնացականյանի կողմից անհիմն քննադատությանը մատնված հոդվածի հիմնական եզրակացությունն այն է, որ «Զվարթնոցի կառուցվածքի բարդ տարածական համակարգի առանձին մասերն աշխատում են համատեղ, որի շնորհիվ վերաբաշխվում են նրանց վրա ազդող ճիգերը, բեռնաթափում են լարված տար-

րերը, և ընդհանուր աշխատանքին մասնակցում են քիչ բեռնավորվածները։ Կառուցվածքի այս բարդ տարածական աշխատանքի պայմաններում հնարավոր չէ անջատել կառուցվածքի մասերը և ուսումնասիրել նրանց լարված վիճակը»[12]։ Այնուհետև ինժեները պայմանականորեն հաշվարկներ է իրականացնում Ա. Վ. Կուզնեցովի սկզբունքներով, անկախ նրանից, որ այդ ձևով հաշվարկելը հիմքում սխալ է։ Եվ այնուամենայնիվ այդ ձևի հաշվարկներով անգամ Սարգսյանը եզրակացնում է «վերոհիշյալի հիման վրա կարելի է պնդել, որ Զվարթնոց տաճարի վերակազմության Թորամանյանի նախագծում իբրև հիմք ընդունված կառուցվածքները, անկասկած, ունեին ամրության մեծ պաշարներ»։[13] Այնուհետև «Այսպիսով կարելի է պնդել, որ Զվարթնոց տաճարի վերակառուցման Թորամանյանի նախագիծը համակողմանիորեն հիմնավորված է»։[14]

Ս. Մնացականյանն իր մեթոդին հավատարիմ, մեղադրելով Սարգսյանին գրում է. «այս ամենից հետո թվում է, որ մենք ոչ մի իրավունք չունենք միջնադարյան հայ ճարտարապետին վերագրելու այն, ինչ նա պարզապես չէր կարող գիտենալ այն ժամանակվա մաթեմատիկայի և շինարարական տեխնիկայի զարգացման աստիճանի պայմաններում»։[15] Եվ ապա, «Չի կարելի այսօրվա ինժեներական մտածողությունը վերագրել միջնադարյան ճարտարապետին»։[16]

Օրինական հարց է առաջանում, ու՞մ են ուղղված Մնացականյանի հարցապնդումները. ինժեներ Հ. Սարգսյանին. բայց չէ որ ինժեներ Սարգսյանը ոչինչ չի վերագրում միջնադարյան ճարտարապետին, այդ ինքը՝ Ս. Մնացականյանն է նման բան վերագրում Սարգսյանին ու ինքն էլ մեղադրում վերջինիս չգործած մեղքերի համար։ Այս ոչ ավել, ոչ պակաս խեղկատակություն է գիտության մեջ, այս երևույթին մի այլ անուն չի կարելի տալ։

---

[12] *Հ. Գ. Սարգսյան*, Զվարթնոցի կառուցվածքների մասին. – ՊԲՀ, 1977, N 2, էջ 219։
[13] Նույն տեղում, էջ 220։
[14] Նույն տեղում, էջ 221։
[15] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցի քարային կոնստրուկցիաների հարցի շուրջը, էջ 221։
[16] Նույն տեղում, էջ 223։

Ս. Մնացականյանի հոդվածում մի շարք անհիմն դրույթներ կան, որ, ցավոք, այստեղ հնարավոր չէ ամենալայն մանրամասնությամբ ժխտել, բայց որ այդ անել անհրաժեշտ է, վեր է կասկածից։ Օրինակ, նա ի՞նչ իրավունքով «հայկական ճարտարապետության ամենահիմնական օրենքներից մեկն» է համարում «կամարների և թաղերի հենարանները միևնույն մակարդակի վրա տեղավորելը», երբ հայ ճարտարապետությունը 4-րդ դարի Քասաղից մինչև մեր օրերը բազմաթիվ օրինակներով ժխտում է իրեն վերագրվող Ս. Մնացականյանի ինքնաստեղծ, մտածածին «օրենքները»։

Թորամանյանական վերնահարկը ժխտելու համար Ս. Մնացականյանը ամեն անգամ նշում է «վեր տանող աստիճանների հետքերի բացակայությունը», և ամեն անգամ ողջամտություն չի ցուցաբերում խոստովանելու, որ ավերակում ոչ միայն աստիճանների հետքեր կան, այլ նաև 1967 թվականից ի վեր մշակվել ու մի շարք հետազոտողների կողմից ճանաչման է արժանացել սենյակների հոծ միջնապատի ներսում երբեմնի եղած քարե աստիճանների տարբերակը։

Ինչ վերաբերում է արևելակողմի սենյակների իբր 9-րդ դարում կառուցված և բուն բոլորակ տաճարին հետագայում կցված լինելուն, անհիմն ենթադրություն է, որ հետևանք է պարզ թյուրիմացության, քանի որ ավերակում ցարդ պահպանվում են տաճարի երկու մասերի հանդիպման անկյունում հոծ պատերի ներսի միասնական շաղախազանգվածները։ Այդպիսիք հետագա վերակառուցման արգասիք համարելը, նույնն է, թե անտեղյակ լինել շինարարություն վարելու տարրական կանոններին։

«Զուկ որսալու նպատակով ջուր պղտորելու» նման բան է, երբ գրում է, թե «Զվարթնոցի քարային կոնստրուկցիաները բնավ էլ արտակարգ, սահմանային բեռնավորվածություն չունեին» , մոռանալով, որ դեռևս 1963 թ. լույս տեսած «Զվարթնոց» աշխատության էջերում բերված է, որ տաճարի կրող տարրերում, այդ թվում և մայր մույթերում լարվածությունը հասնում է ընդամենը 12-14 կգ մեկ քառակուսի սանտիմետրի վրա։

Ս. Մնացականյանը Զվարթնոցի իր վերակազմության մասին մերթ գրում է «Այս ամենը անժխտելի կերպով ապացուցում է, որ տաճարի երկրորդ յարուսն ունեցել է ոչ թե շրջանաձև, այլ տետրակոնիխսային կոմպոզիցիա, և *այնտեղ բնավ բացակայել է ներքին տետրակոնիսը քողարկող այն շրջագծային պատը, որը պատկերված է Թորամանյանի վերակազմության նախագծում*»:[17] Նույն հեղինակը մի այլ անգամ գրում է «*… բացառված չէ, որ Զվարթնոցը երկրորդ հարկաբաժնում ունենար ռոտոնդաձև հորինվածք*»:[18]

Այս անգամ նորից վերադարձել հնին և ոչ մի առաջադիմության նշան՝ «պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ վաղուց արդեն կասկածի տակ է առնված այդ պատի գոյությունն առհասարակ և առաջարկված են վերակազմության այլ նախագծերը՝ երկրորդ հարկաբաժնի տետրակոնխային հարկաբաժնով»:[19]

Ս. Մնացականյանի ժամանակ առ ժամանակ Զվարթնոցին նվիրված ակներև ձախողակ ելույթները մամուլում վերջնականապես համոզում են, որ նրա համար այնուամենայնիվ զվարթոցագիտությունը մնում է չմարսված նյութ, բուն Զվարթնոցը – հիմքում՝ արևմուտքի բոլորակի ու արևելքի խաչակերպի միաձույլ, միասնաբար հանդես գալը՝ չհասկացված, չվերծանված առեղծված:

Թվում է, որ լայն ընթերցողի համար ամենևին էլ անհետաքրքիր չէ գիտենալ այն պատճառների մասին, որոնք առիթ են դառնում ԳԱ արվեստի ինստիտուտի բազմամյա հետազոտողի որոշ գործերում այդ կերպ սովորական դարձած հակասությունների, սխալների առատորեն երևալը:

Մեր կարծիքով այդպիսի երևույթները կարող են հետևանք լինել աշխատությունների հիմքում ռեալ, իրական նյութի, փաստի փոխարեն, հայեցողական, ինքնահնար դրույթների նախընտրելը, մի երևույթ, որը, համե-

---

[17] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցի վերակազմության նախագծի հարցի շուրջը. - «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր. հասարակական գիտություններ», 1959, N 4, էջ 66:

[18] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 103:

[19] *Ս. Խ. Մնացականյան*, Զվարթնոցի քարային կոնստրուկցիաների հարցի շուրջը. – ՊԲՀ, 1978, N 2, էջ 219:

նայն դեպս, ճարտարապետության հետազոտությանը շոշափելի նվաճում չի կարող երաշխավորել։

[Շարադրվել է, թերևս, 1980 թ.]